

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ՀԱՅԵՐԵՆ ԽԱՂԵՐԻ ՏԱՂԱԶԱՓՈՒԹՅՈՒՆԸ

Կ. Գ. ԳՈՒՐԳԱՐՅԱՆ

Աշուղական խաղերն իրենց կառուցվածքով հիմնովին տարբերվում են սովորական բանաստեղծություններից. ուստի երբ խոսք է լինում աշուղական տաղաչափության մասին, չպետք է կարծել, որ ընդհանուր տաղաչափական օրենքները պարտադիր են նաև աշուղների համար: Բանաստեղծության, անգամ ժողովրդական երգերի մեջ պահանջվում է ուղղական շեշտերի կանոնավոր հաջորդականություն՝ համաձայն ոտանավորի ընդհանուր սխեմայի: Այս հանգամանքը հազվագյուտ աշուղական երգերում կարելի է նկատել: Աշուղական բանաստեղծությունը հորինվում է ոչ թե կարդալու, այլ՝ երգելու համար, ուստի նա հաշվի է առնում եղանակի շեշտերը և ըստ սյգմ է շարադրում բառական տեքստը: Միակ ընդհանուր բանը, որ նկատվում է բանաստեղծության և աշուղական տաղի միջև՝ տողում եղած վանկերի քանակական հավասարությունն է: Աշուղական երգի համար ևս պարտադիր է խստորեն պահպանել տողերի մեջ վանկերի համապատասխան քանակը՝ ըստ երգի տեսակների: Այս վանկերի քանակով ու տողերում եղած հատածներով էլ որոշվում է աշուղական երգի տեսակը:

Դարերի ընթացքում աշուղները մշակել են երգերի ու եղանակների տասնյակ տեսակներ, որոնք սերնդ-սերունդ ավանդվել են՝ միաժամանակ հարստանալով ու կատարելագործվելով: Այս պատճառով էլ աշուղները քաջածանոթ պետք է լինեին երգերի բոլոր ձևերին, որպեսզի հնարավորություն ունենային հորինելու անթերի տաղեր: Ուրիշ խոսքով՝ մինչև աշուղը չիմանար երգեր հորինելու բոլոր կանոններն ու առանձին երգերի տեսակները, Բա իրավունք չունեի մասնակցելու վարպետ, «ուստա» աշուղների (ուստաբարների) վեճերին ու հավաքույթներին: Այս իմաստով աշուղները ավելի խստապահանք էին իրենց աշակերտների նկատմամբ, քննության էին ենթարկում վերջիններիս և տալիս ուստայի (վարպետի) կոչում ու իրենց օրհնությունը:

Բացի ոտանավորների (երգերի) տեսակներից, որոնք 50-ից ավելի են, աշուղները ժառանգում են իրենց անմիջական վարպետներից ու հին աշուղներից եղանակներն ու նույնիսկ պատրաստի հանգերը: Սա է պատճառը, որ ամենամեծ աշուղների տաղերում անգամ կարելի է գտնել բազմաթիվ հանգեր, որ գալիս են հին վարպետներից: Ինչպես նշում է Մ. Արեղյանը, աշուղները մեր դրականության մեջ հսկայական դեր խաղալով հանդերձ, չեն զարգացրել մեր տաղաչափությունը: Տաղաչափական տեսակետից աշուղական արվեստն ամենաթերին է լեզվական ուղղի նկատմամբ: Աշուղական երգերը երաժշտական են, բայց մեծ մասամբ մոնոտոն: Միայն մեծ աշուղների մոտ երբեմն եղանակի շեշտված, գորեղ տակտամասերը համընկնում են բառական շեշտի հետ, իսկ ուղղական շեշտերի հետ գրեթե երբեք չեն համընկնում: Լեզվի ուղղական շեշտերը, պարզ կամ բարդ ոտքերը (անդամները), բառական ոտքերը

(յամբ, անապետ, քորեյ և այլն) աշուղները հաշվի չեն առնում: Երգի երաժրշտականությունը պահպանում են հավասարավանկ տողերը միայն: Տողերի ամբողջությունը իրեն մի մեծ ուղիղանկյան միություն պահպանվում է տողավերջի դադարով, որ հաստատ թւ կանոնավոր կերպով կրկնվում է որոշ թվով վանկերից հետո: Բացի սրանից տողերը զգալի են դառնում նաև հանգերով, որ խիստ բնորոշ է աշուղական ոտանավորի համար: Այս հանգավորումը հմուտ աշուղների մոտ հաճախ բազմազան ու ճոխ է, երբեմն էլ բավարարվում են միայն եռյակ բառերի կրկնությամբ՝ ամեն տողի կամ տան վերջում:

Աշուղական երգերում մեծ տողերը հաճախ տրոհվում են երկու կիսատողերի, կամ ինչպես բնորոշված է տաղաչափության մեջ կոչել, հատաձևերի: Սակայն հակառակ բանաստեղծական հատաձի կայուն, հաստատուն առկայությունը, աշուղական հատաձևերը միշտ անկայուն են: Օրինակ, միևնույն երգում 11 վանկանի տողի հատաձևերն արտահայտվում են 6—5 կամ 5—6 վանկանի կիսատողերով: Բանաստեղծության սովորական չափերից աշուղներն օգտագործում են նրանք, որոնք մոտ են վանկական չափերին, կազմված են մեծ անդամներով (5, 7, 10, 20-վանկանի ոտանավորներ): Աշուղները բառական ոտքերը հաշվի չեն առնում: Բացի սովորական տարածված տեսակներից (մուսամմազ, գիվանի, գաղել, դյուրեյիթ) աշուղները օգտագործում են նաև տխնիկական ձևերի (էվելյախ, ալիֆլամա, դինջիլլամա և այլն), որոնցում հանդես է գալիս աշուղի վարպետությունն ու հնարագիտությունը: Այս ձևերը հաճախ օգտագործվում են վեճերի ժամանակ, որ մեծ դժվարություն է առաջացնում հանպատրաստից ասող աշուղի համար: Աշուղական երգերը զանազանվում են նաև ըստ իրենց արտահայտած գաղափարի և ըստ բովանդակության: Այսպես՝ Քյարամի կոչվող երգերը դժբախտ, անպատասխան սիրո և արտակարգ տխրություն ու թախիժ արտահայտող երգեր են, Քյոր-օղլի կոչվող երգերը հերոսական բովանդակություն ունեն, Սիոնի կոչվածները՝ կրոնական և այլն:

Մեծանուն Սալաթ-նովան օգտագործել է աշուղական արվեստի բազմազան ձևերի զգալի մասը: Երեք լեզվով հորինած նրա խաղերի թիվն անցնում է երկու հարյուրից: Ղրանք գրված են աշուղական զանազան չափերով: Սակայն մեր քննության նյութը լինելու է Սալաթ-նովայի հայերեն ստեղծագործությունը, ուստի, բնական է, որ մեծ վարպետի երգերի շատ տեսակներն ու ձևերը դուրս են մնալու մեր տեսադաշտից:

Հայերեն խաղերում ամենից շատ մուսամմազն է օգտագործել Սալաթ-նովան: Նրա տաղերի մեկ երրորդից ավելին մուսամմազներ են՝ 14, 15 և 16 վանկանի: Սակայն պետք է շեշտել, որ այս մուսամմազները նման չեն միմյանց, կրկնություններ չեն, այլ ամեն մեկը մի կատարելություն է՝ իր ուրույն հանգավորումով ու պոետական հղացմամբ:

Մուսամմազը սովորաբար ունենում է հինգ և ավելի տուն, յուրաքանչյուր տունը՝ շորսից մինչև ութ տող: սակայն շատ տարածված են 4 և 5 տողանոց տները, կա նաև 8 տողանոց մուսամմազ, որը կոչվում է Շարի-շորի: Սրանք հազիս են գալիս տարբեր հատաձևերով: Ըստ վանկերի քանակի արտահայտվում են այսպես՝

ա) 4—3—4—3—14

բ) 3—4—4—4=15 կամ 4—4—4—3—15

գ) 4—4—4—4=16

Սայաթ-Նովայի մութամաղները մեծ մասամբ վերջին ձևով են հորինված: Օրինակ՝

էնդուր աչկրս/չէ ցամառում/սրտիս մեշրն/արին մնաց.
Վունչիչ դուրով/չը լավացավ/մրկամրս հիդ/յարին մրնաց...
Ըն խոսկ ունիմ/իլրիմագով/անգան արա/ո՛վ աչկի լուս...
Ինձ սիւնցիւր/չիսն նրնգար/խաղի դավրար/իմ քիզ ամա,
Յիս Բու մանրն/վ՛ունց կու խրնդրիմ/նաղլ ու շաֆար/իմ քիզ ամա:
Արի համով դուլուդ սուր/խալխի նոֆար/Սայաթ-Նովա.
Ամեն մարք չի/կանա հանգի/շահով շրֆուր./Սայաթ-Նովա...

Այսպիսի 16-վանկանի մութամաղների մեջ հաճախ լինում է հետադարձ 8—3. գեղեցիկ են, հարկավ, նրանք, որ 4—4—4—4 սխեմայով են գնում, իսկ այդ սխեման երգի բոլոր տողերում պահպանել դժվար է, ուստի հաճախ աշուղը դործ է ածում ութ վանկանի կիսատողեր: Օրինակ՝

Թեզուզ դրբատանըն պան տաս/ձեծով չի խրաավի խիվրն...

Սայաթ-Նովայի դավթարի Խ խաղը (ըստ Գ. Ախվերդյանի գրքի) 15-վանկանի մութամաղ է, որ շարադրված է 4—4—4—3 սխեմայով: Երգը գրված է 5 տողանի տներով, ընդ որում Դ և Ե տողերը կրկնվում են ամեն տան մեջ՝ երեք տողից հետո: Այս չափով ու ձևով ուրիշ երգ չկա նրա դավթարում.

Դաստամագրտ/սիմ ու շարբար./նամ շաղ կկած/ոնհան է.
Ունիբրտ դա/լամով Բաշած/Բեսրտ գար/նրան է.
Ակրոֆիբրտ/լալ ու մաբբիտ./ոսնգիտ մարք կու երանն:
Թաֆ յիս միռնիմ/դուն սաղ քիս./կչիստ իմ զիրիգման է.
Նազիտ միռնիմ./նազ մի անի./նազրտ ինձ կու սրսանն.

Սայաթ-Նովայի մութամաղների մեջ արտասկարզ կատարյալ ու հնչել է «Քանի վուր ջաֆն իմ» խաղը, որը կազմված է 5—5—5—15 սխեմայով: Նրան երաժշտականություն ու բարեհնչունություն են տալիս ներքին հանգերը: Այս երևույթը նորություն չի եղել մեր գրականության մեջ (ինչպես նշում են որոշ բանասերներ). այսպիսի բանաստեղծություն գրել է Նազաշ Հովնաթանը, որի սպղեցությունը ակնհերե է Սայաթ-Նովայի խաղերի վրա: Հենց այս խաղի տակ նա գրել է. «Թասերըն չինի երգի հանդում», ընդ որում հասցն այստեղ վերաբերում է թե՛ երգի կառուցվածքին, և թե՛ եղանակին: Այս եղանակով էլ երգվում է ցայսօր վերոհիշյալ մութամաղը: Սակայն Սայաթ-Նովան այստեղ գերազանցել է Նազաշ Հովնաթանին, ստեղծել է մի սքանչելի երգ՝ բարձր արվեստով, որին չհասավ ոչ մի աշուղ: Այս երգը, ինչպես Սայաթ-Նովայի գրեթե բոլոր երգերը, 5 տնից է բաղկացած, ամեն տուներ՝ 4 տողից, սակայն ի տարբերություն մյուս մութամաղների այս երգի առաջին տան բոլոր տողերը միահանգ վերջավորություն չունեն: Չորրորդ տողը, որ կրկնվում է բոլոր 5 տների վերջում, չի հանգավորվում ոչ մի տողի հետ, սակայն այս հանգամանքը չի թուլացնում երգի երաժշտականությունը.

Շուռ գանձ հանդամով./չիբգնալին նամով/քուփրս բացվիլ է.
Խաղ կանչիճ հանգով./լալեմն ոսնգով./վարբըն բացվիլ է.
Սուսան սրմբուլով./գարիբ բլրուլով բաղրն լցվիլ է.
Մուտ բաղչեն նագով./քիզ գովիմ սագով./յա՛ր, իլրիմագով:

Տարաբախտարար սա միակ նմուշն է Սայաթ-Նովայի ստեղծագործությունների մեջ և եղակի էլ մնում է, բանգի ոչ մի աշուղ չի հետևել այս օրինակին: Երգի

շեշտերը խիստ կանոնավոր են, սակայն չեն համընկնում լեզվական շեշտերի հետ. ահա սխեման՝

---/--- --/---
---/--- --/---

Սայաթ-Նովայի մյուս մուխամմազներն ունեն մեծ մասամբ 16-վան-կանի կառուցվածք, ըստ երևույթին երգվել են մեկ-երկու հայտնի եղանակով։ Շատ է հիշատակվում «Դիրա ու էնգիդունիայի հանդով» (Դ, Ե, ԺԳ, ԺԴ, ԻԱ, ԻԵ, ԼԵ, ԼԸ, ԽԱ խաղերը), իսկ և խաղը, որը սկսվում է հենց այդ բառերով («Դիրա ու էնգիդունիա, դարբար ու զար իս դովելի...»), վերջում ունի հետևյալ ծանոթագրությունը. «էս խաղն ու որ սովորի Դոստիի խաղի ձևով ասե, թե որ չիմանաս հարցո՞ր թե դժգուշար իզնադինա բազ դաստա բեղաստա թարփա-նուր»։ Բնական է, որ այդ երգի եղանակով երգել է Սայաթ-Նովան մոտ մի տասնյակ երգ, զույգ և ավելի։ Առհասարակ աշուղական երգերը միշտ կրկնում են կամ իրենց, կամ էլ օտար հեղինակների եղանակները. այսպես կարիք կլինի հազարավոր եղանակների։ Երբեմն միևնույն եղանակով տարբեր աշուղներ վիճում են միմյանց հետ՝ հորինելով բոլորովին տարբեր, յուրօրինակ երգեր։ Աշուղ Ջիվանին, օրինակ, որ ընդամենը կես դար առաջ է մեռել, թողել է մոտ 1000 երգ, բայց հազիվ մի քանի տասնյակ եղանակով են երգվել այդ երգերը։

Սայաթ-Նովայի մուխամմազները, սակայն, մոտոտուն չեն, աշուղն աշխատել է նույն չափով զրված խաղերին տալ տարբեր գունավորում, հատուկ հանգավորում։ Կրկնություններից խուսափելու համար երգի 5 տմերից ամեն մեկը վերջացնում է տարբեր սեռի հանգերով, իրար հաջորդում են արական և իգական հանգեր, որոնք բարեհաշուներով են ստեղծում։ Մուխամմազը Սայաթ-Նովան հասցրեց բարձր կատարելության, և հետագա շատ աշուղներ ու բանաստեղծներ հետևեցին հանճարեղ երգչին։

Սայաթ-Նովան իր մի շարք ութվանկանի ոտանավորները բացլիբ է անվանել։ Սակայն աշուղական երգերի մեջ թասլիբն ունի յուրահատուկ ձև, որով տարբերվում է 8-վանկանի դյուրեյիթից, բյուրդիստան դյուրեյիթից և այլն։ Թասլիբը զրվում է 8-վանկանի տողերով, սակայն ամեն տան 3 տողից հետո պետք է կրկնվի մի եռավանկ ոտք (2 անգամ)՝ միամյան հանգերով։ Թասլիբի օրինակ է աշուղի «Զիս ասում» խաղը.

Սայաթ-Նովեն վո՞նց դրեջանա,
Աշկիրտ օսիս փրեջան ս,
Գուշմանի լիզուն մրեջանա
 Չարերով,
 Չարերով.
Բարով տեսա, իմ սիրեկան։

Գեղեցիկ օրինակ է նաև «Բլրուլի հիդ» հանրածանոթ խաղը, ուր չեն պահպանվել սովորական թասլիբի եռավանկ կրկնվող բառերը. բանաստեղծն այստեղ ավելի բարդ ձև է ավել խաղին, նրա տները 7 տողանոց են, փոխանակ վեցի.

Բլրուլի հիդ լաց իս էլի,
Վարբի երման լաց իս էլի,
Վարբաջրով քաց իս էլի.—
 Քաց իս էլի.

Չ'կա ֆիգի նման, չ'կա ֆիգի նման.

Քիզ նման, ֆիզ նման.—

'Իուն իս աննման:

Ութվանկանի մյուս խաղերը գյուրեթիթներ են, որ շատ են գործածում աշուղները: Սա հորինվում է 4—4—8 սխեմայով, գրվում է սովորաբար 3 կա՝ 4 տուն, բայց ինչպես գիտենք Սայաթ-Նովայի երգերը հինգ տնից են մեծ մասամբ: Դյուրեթիթ բառը կազմված է պարսից գյու (երկու) և բեթ (տուն, երկտող) բառերից, ճիշտը կլինի գյուրեթի Սա նման է վանկական չափով ոտանավորին, սակայն դժվար է միշտ պահպանել 4—4 ոտքերը, երբեմն կտրատվում են բառերը. ասենք՝

Սալրուի նր/ման կանանչ իմ,

եկ խոսի ձայ/նիտ նանանչ իմ,...

Բայց որոշ տողերում այս խաղը գրված է բառական ոտքերով և մոտենում է բանաստեղծական տաղաչափությանը. օրինակ՝

Ուստի՝ զու Բաս, պարիբ բըրբուլ,

'Իու մի՝ լաց լի./յի՛ս իմ լալու.

'Իու մարք պրտոն./յիս գոզալիմ,—

'Իու մի՝ լաց լի./յի՛ս իմ լալու:

Խաղը, անտարակույս, հորինված է նաղաշ Հովնաթանի «Տաղ սիրո» բանաստեղծության հետևողությամբ. դա հաստատում է թերևս առաջին տողը, որը գրեթե նույնն է՝ միայն մի բառի տարբերությամբ.

Ուստի կուզաս/բազբու բըրբուլ,

Քեզի բարով/ես ֆեզ եմ զուլ.

Լեզուդ շաբաթ./սաշրդ սըմբուլ.

Քսաղբու լեզվով/չուր տուր ինձի:

Աշուղների սիրած ու գործածած չափերից է նաև 11-վանկանի ոտանավորը, որ տեսնում ենք Սայաթ-Նովայի դավթաթներում ևս: Ինքը երգիչն իր այդպիսի չափով գրած խաղերի սուկ գրել է՝ «ղափիա» կամ «ղափիա յարանա» այս երգերի մեջ երբեմն պատահաբար հանդիպում ենք 4—4—3=11 սխեմայով տողերի. օրինակ՝

Չենրտ Բազբու/ունիս՝ լամզով/կու խոսիս...

Նույնիսկ ամբողջական տունը նույն կազմությունն ունի, սակայն հաջորդ տների մեջ խախտվում է սխեման, դառնալով 6—5. օրինակ՝

Ղումաշ ասիմ՝/չուրեղեն է, կու մաշվի,

Սալլի ասիմ՝/ախրու մին օր/կու տաշվի.

Ջեյրան ասիմ՝/շատ մարք ֆիգիդ կու տաշվի.

Բաս վ'ունց քաբիփ/անիմ՝ մաբա իս, գո՛ղալ:

էս Բու Սայաթ-Նովուն/դուն սրպանեցի

'Իրլիդ եկած/դաղեն առա/յիս, գո՛ղալ...

Այս երգը իր կառուցվածքով դոշմա է, ունի հիմնականում 6—5 կազմություն, բոլոր տները վերջանում են առաջին տան Բ և Դ տողերի նման՝ ամեն 6 վանկից հետո կրկնվում է «աբա իս, գոզալ», որ դոշմայի հիմնական բնորոշ կողմերից մեկն է: Այս ձևի երգերն ունենում են 3—5 տուն, ամեն տունը՝ 4 տող: Բովանդակությունը բազմազան է, մեծ մասամբ սիրային կամ խրա-

տակա՞ն ընույթի: Նույն ձևի կառուցվածք ունի «էշխն՝ վառ կրակ է» երգը, ուր հեղինակը օգյուծլամա (խոհ, դատողություն) է կոչել, երևի բովանդակության համար:

Մյուս 11-վանկանի երգը (Գ) Սայաթ-Նովան կոչել է ուշլամա: Այս ձևը շատ տարածված է աշուղների մոտ: Ուշլամայի ամեն տան վերջին տողը, ինչպես և առաջին տան Բ և Դ տողերը, պետք է արտահայտեն երեք բան՝ օրինակ՝

Արի ինձ անգամ կալ, ա՛յ դիվանա սիրտ,
Հայա սիրե, աղար սիրե, առ սիրե.
Այսաբքս բունն ըլի, ի՞նչ պիտիս տանի՝
Աստված սիրե, հոգի սիրե, յար սիրե:

Ե՛կ, արի՛, սի՛րտ, մրնա դուն մե դամադի,
Հայսլ մրտիկ արա հացի ու ադի.
Հենց բան արա՝ մարք վրետ չը ծիծաղի՝
Խրատ սիրե, սարբը սիրե, յար սիրե...

Ուշլամաները սովորաբար ունենում են 3—4 տուն, ամեն տունը՝ 4 տող, ամեն տողը՝ 11 վանկ: Մեր նոր աշուղներից ուշլամա դրել է Զիվանին՝ օրինակ՝

Խեբ բան կա շատ է սիրում ականջրս՝
Ոսկիի ձայն, սիրունի ձայն, ջրի ձայն:

Այս չափով (11 վանկանի) երգերից մեկը՝ «Շատ մարթ կոսե յիս յարեմնն հասրաթ իմ» Սայաթ-Նովան կոչել է վարսադի, սակայն դա սովորական զոչմա է, կամ ինչպես ինքը կասեր՝ ղափիա: Վարսադին ունի իր բնորոշ կառուցվածքը. առաջին տան Բ և Դ տողերի ու հաջորդ տների Դ տողի վերջին միավանկ բառերը բաժանվում են տառերի, և այդ տառերը դրվում են իրենց այրբենական անունով՝ ասենք՝ կեն, այբ, թո (կաթ). օրինակ՝

Էշխ ու հավատ ունիմ, որ ժամը խոսամ,
Վարպետից եմ սուել դա, այբ, սե (դաս).
Տե՛ր իմ մեղքս շատ է, քողութուն արա,
Արժանացու առնիմ մեն այբ սե (մաս):
Վաղեն բամամել է, քոչը կը բառնա,
Գերեզմանիս վրա գիմ այբ սե (դաս):

(Սեյրան-օղլի Սարգիս)

Սայաթ-Նովան էլ ունի երկու խաղ, ուր վերջին տողերի միավանկ, նույնիսկ երկվանկ բառերն արտահայտված են իրենց բաղադրությունը կազմող տառերի անուններով: Ինքը այդ տաղերը կոչել է զարառեջա.

ԱՅԲն Աստված սիրիւ, Բեն բարի կացի.
ԳԻՄ գաղաթրտ արա ԴԱ ու ԱՅԻԲ ԽՈ (դաթ).
ԵԶ երանի չկա ԶԱ գալում մարթուն՝
Է Ըտ Էրեսիտ դի ԹՈ ու ԱՅԻՐ ԽՈ (թաթ):

Կամ՝

Մրտա էշխի քուրեն խալիս դառնալու,
Սիրտըս ելամ ԳԷ ու ԱՅԻԲ, Էրկու Բեն (բարաբ).
Կա՛մամ սափկեն մտա դարդրն բառնալու,
[Է] ո՛ւմ բոնիմ Սե ու ԱՅԻՐ Էրկու Բեն (սարաբ):

Ինչպես տեսնում ենք, առաջին օրինակում առկա է վարսադի տողը, միաժամանակ երգը զարգանում է այրբենաբար (Ա-ից մինչև Բ), թեև որոշ տա-

ուեր պակասում են: Այս երգը բարդ կազմություն ունի և պետք է կոչվի վար-
ուաղի-ալիֆիամա, ինչպես միանգամայն ճիշտ անվանել է Գարեգին Լևոնյանը:

Հետաքրքրական կազմություն ունի Սայաթ-Նովայի Ե երգը (ըստ նոր ժո-
ղովածուի՝ 42), որ Ախվերդյանը ռազիանի է կոչել: Այս ձևով երգ մեր աշուղ-
ները չեն հնարել, սա միակ նմուշն է հայ աշուղական գրականության մեջ:
Առաջին երկու տողն ունեն 12-ական վանկ (8—4—12), երկու տողն էլ նույն
հանգով են. երրորդ տողը նույնպես 12 վանկ ունի, բայց չի հանգավորվում
առաջին երկու տողերի հետ, ուստի երրորդ տողի վերջում, ավելի ճիշտ տո-
ղատակին (որ կազմում է չորրորդ տողը), Սայաթ-Նովան դրել է մեկ հնգա-
վանկ բառ, որը հանգավորել է երրորդ տողի հանգով: Այնուհետև գալիս են
ութվանկանի (5—3) և միահանգ երեք տող. որից հետո դարձյալ կրկնվում է
երրորդ տողն իր հնգավանկ կցորդով

Քեզուզ Բու Բաշըն մարբեիտ տան բրոյի-բրոյի,

Քեզուզ Բու Բաշըն ալմաս տան բրոյի-բրոյի,

Յա'ր, չիմի տա, չիմ հիւացնի Բիզ Բու յարեսն, բարեբարեսն:

Չիմ Բաշվի Էկած մահեսն,

Բաղիփի տրված անեսն բրոյի-բրոյի.

Քեզուզ բաղամ գա Շահեսն,

Յա'ր, չիմի տա, չիմ հիւացնի Բիզ Բու յարեսն, բարեբարեսն:

Այս խաղը, մեր կարծիքով, ամբողջական է, թեև վերջին հրատարակու-
թյան ծանոթության մեջ հարգարժան բանասեր Ս. Հասրաթյանն ասում է.
«Կասկածից վեր է, որ սա 6—7 տնից բաղկացած մի ամբողջական խաղի հատ-
վածն է»: Գուցե երկրորդ տունը կիսատ է, և իսկապես չորս տող պակաս է.
հենց այդ տողերում էլ գուցե հիշատակված է եղել աշուղի անունը: Այլևս եր-
րորդ տուն լինել չէր կարող, քանի որ առաջին տան շուտ տված կրկնությունը
է երկրորդ տան սկիզբը, իսկ վերջին մասը, իհարկե, պետք է լինի ութվանկանի
(5—3) տողերով, սակայն էոր բովանդակությամբ: Համենայն դեպս, այդպիսի
այլ բանաստեղծություն չկա, որ կարելի լիներ բաղդատել և հետևություն անել:

Հանձարեղ աշուղն ունի բարդ կազմության խաղեր, որ խտացնում են այս
կամ այն ձևի առանձնահատկությունները: Այսպես՝ մուխամմալ-բայաթի (խաղ
ԺԱ) է «Խոսկիրբու մալում իմ արի» խաղը, որի մեջ մուխամմալի ամեն մի
տնից հետո գրված է մի-մի տուն բայաթի (4—3—7 վանկ): Մուխամմալը այս-
տեղ հյուսված է հինգ տողից, ամեն տողը՝ 16 վանկ, առաջին տան բոլոր հինգ
տողերը ունեն նույն հանգավորումը (a a a a a), հաջորդ տների Ա Բ և Գ
տողերը միահանգ են, իսկ հինգերորդ տողը հանգավորվում է առաջին տան
վերջավորությամբ («...ուր իս ախպեր», այսինքն՝ b b b b a): Բայաթիները կա-
ռուցված են ժողովրդական 7-վանկանի սովորական ոտանավորների ձևով
(4—3). հանգավորվում են Ա, Բ, Գ տողերը, իսկ Դ տողը մնում է անհանգ: Այս
հինգ տան բայաթիները, սակայն, իրար հետ որեէ բանով չեն կապվում, կապ-
վում են միայն մուխամմալի վերջին, հանգավորող բառի հետ և այդ բառով
էլ սկսվում են. այսպիսով, մի տեսակ շղթա է կազմվում մուխամմալի վերջին
հանգի և բայաթու սկզբի բառի միջոցով, որը աշուղական երգարվեստի տեր-
մինով կոչվում է զինջիլլամա (շղթայաբար): Օրինակ, երգի վերջին մուխամ-
մալային տունը վերջանում է՝ «պիստուր իս ախպեր» բառերով, իսկ բայաթին
սկսվում է «պիստուր սիրալտ պարզ արա» տողով: Ահա այդ խաղը.

Խոսկիրտ մալում իմ արի՛/անհաատ մահուր իս, ա՛խպեր.
 Օսկե փաշումն լըցրած/անմահական ջուր իս, ա՛խպեր.
 Խրմողրն վո՛ւնց կու կրչտանա՛դուն կարեն, ախպուր իս, ա՛խպեր.
 Աշխարհոն ծով՝ ոուն մեջրն նավ./մահ գու Բաւ՝ փրփուր իս, ա՛խպեր.
 Վախում իմ քե՛ ինձ էլ Լեիս՛/անհանգչիլի հուր իս, ա՛խպեր:
 Հուր իս՝ էշտով/կրակած,
 Խոսկ իմ ասում/առակաց.
 Իմ սիրմա էրծար ախպեր՝
 Օսկե ջրով/վարակած:

Ասար միգիդ ի՛նչ իս կամում, ի՛նչ է ասում էտ Բո վալրտ,
 Իսկի չի՛ս գալի, չի՛ս ասում. «աջար ի՛նչ է. բա՛նգա, հալրտ».
 Ասոված վրկա, սիրտըս Լեից ջեյրանի նրման ման գալրտ.
 Յիս Բիգա:նից չի՛մ հիտանա, քեզուց դուս գա խարու խալրտ.
 Բեզուց սիրիս, քեզուց ատիս, քե գույե համբուրիս, ա՛խպեր:
 Համբուրիմ սիրով համբուր.
 Վաւնցուր խեչի՛ն է գաստուր.
 Ով Բիգ խայան մրսիկ տա՛
 Իտոնա Լեռու աչկով կուր:

Ավելի բարդ է «Յիս կանչում իմ լալանին» խաղը: Այստեղ խոտացված են ռուբայի, բալադի և քեջնիս ձևերը: Այս երգը դավթարից արտագրելիս ռեորդ Ախվերդյանը բայաթու երկու տողերը միացրել է իրար և ստեղծել 14 վանկանի տողեր (3 տող), իսկ ռուբայի կոշվող տները դրել է անփոփոխ: Դատելով կառուցվածքից ու բովանդակությունից, առաջին 6 տողերը (7 վանկ) բայաթի՛ արտահայտություն ունեն, ուրեմն պետք է գրվեն յոթ վանկանի տողերով (4—3), սակայն ինչպես հայտնի է, բայաթին չորս տողանոց բանաստեղծություն է, որի Ա, Բ և Դ տողերը նմանահանգ են, իսկ Գ տողը միանգամայն ազատ է հանգավորումից: Իր մի հոգվածում բանասեր Բարեգին Լեոնյանը այս երգը մեջ է բերել տասը տողանոց տներով և առաջին 6 տողը համարել է բայաթի Մեր կարծիքով միանգամայն ճիշտ է վարվել բանասեր Մ. Հասրաթյանը, որ բայաթուց անջատել է վերջին 14 վանկանի տողը և պետեղել բայաթու և ռուբայի (կամ ռուբայաթի) միջև՝ ստեղծելով ինը վանկանի տողեր: Միանգամայն համոզիչ է բանասերի այն կարծիքը, թե այս երգը ստեղծվել է երկու տարրեր երգերի մեխանիկական կառուցով: Ռուբայիների և բայաթիների միջև տրամաբանական կապ չկա, ուրեմն միացրել են մեջրնդմեջ երգելու համար. դրա համար էլ թե՛ բայաթու և թե՛ վերջին քառյակի մեջ հիշատակվում է աշուղի անունը: Մենք առանձնացրինք բայաթու հինգ տունը և ռուբայի հինգ տները, և ստեղծվեց երկու տարրեր խաղ՝ միանգամայն ինքնատիպ ու ամբողջական. Այս խաղում կան թեջնիսի տարրեր. հանգավորող բառերը կրկնվում են տարրեր նշանակությամբ:

Յիս կանչում իմ ԼԱԼԱՆԻՆ.
 Բաղեշխանեն լալ անին.
 Վայ քե հասրաթետ մեռնիմ,
 Բլրով լիգուս լալ անին.
 Դոստիրս հիոու կսեզեն, յաղիրն գան լալ անին:
 Քի սազ գու Բա ալ դումաշրն, նազանի.—
 Ի՛կ նակատիտ կապե զարլու մուդայիշ.
 Չիոիտ բրոնե օսկեջրած մրկատրն,
 Խունուն խունուն կավերուս տուր առայիշ:

Ինչպես երևում է, վերջին քառատողը ունի զոշմայի ձև ($4-4-3=11$), և բովանդակությամբ երբեք չի հիշեցնում ուսուցաթի, որը խոհական-փիլիսոփայական բնույթ ունի:

Սայաթ-Նովայի խաղերից ամենածավալունը (25 տուն) հանրահայտ բարիթավորն է, որ բավական բարդ կառուցվածք ունի: Գրված է 8 վանկանի դյուրեյիթի չափով ($4-4$), հինգ մեծ մասերից է, ամեն մասը՝ հինգ տուն, քնդ որում չորս տունը 6-ական տողերով, իսկ հինգերորդը՝ 4 տող է և ունի մի փոքրիկ կցորդ («Յար աման»): Հանգավորվում են Ա, Բ, Գ և Զ տողերը՝ միակերպ, Դ և Ե տողերը քառավանկ են, հանգավորված նույն հանգով: Բացի սրանից երգի 5-րդ, 10-րդ, 15-րդ, 20-րդ և 25-րդ տները, որ քառատող և ութվանկանի են, հանգավորվում են այսպես. Ա, Բ, Գ տողերը՝ միևնույն հանգով, իսկ Դ տողը հանգավորվում է 10-րդ տան 28-րդ տողի, 15-րդ տան 28-րդ տողի հետ և այսպես շարունակ՝ մինչև 140-րդ տողը, որով վերջանում է խաղը: Խաղի առաջին տան առաջին տողը չի հանգավորված մյուս տողերի հետ: Բոլոր տները 6 տող ունեն, մինչդեռ առաջինը այդ տողով դառնում է 7, որը ցույց է տալիս երգի տեսակը և որոշ չափով վերնագրի դեր է կատարում: Առհասարակ «Բարիթավորը» կամ «Բահրի թավիլը» աշուղները հորինում էին ոչ թե երգելու, այլ արտասանելու համար: Սրանց վերջին տողը հաջորդ տան առաջին տողի հետ կապվում է շղթայաբար (զինջիլամա), կարդալիս ստեղծվում է ձայնական ելևէջ, ալիքավոր բնթացք: Սրանք արտակարգ հարուստ են հանդերով, ոտքերի և շեշտերի դանդաղանություններ: Բահրի թավիլներ գրել էին մեր շատ աշուղները, սակայն ոչ մեկի գրածը այնքան կատարյալ չէ, որքան Սայաթ-Նովայինը: Այս խաղը դավթարում գրված է եղել արձակ բանաստեղծության ձևով, իսկ Գևորգ Ախվերդյանը վերածել է այն տողերի և դարձրել չափածո.

Անգան առա բարիթավոր, գնա հիղն.
Խաղ մի անի, յարի սիրտն դազ մի անի,
Էդ կրակն չաղ մի անի, չաղ շուռ արի,
Յարսուն տաբի, յարին բեղամաղ մի անի:

Հաջորդ տները բերում ենք չափածո.

Բեղամաղ չրլի միգանից-
Չր հիտանա անմիդ բանից-
Յարբն նազով հոֆիս հանից-
Հանած ծառ է,
Էլխով վառ է,
Չի՛ վախենա սուլթան-խանից:
Խանի պես դիվան իս անում,
Շահգադի պես սան իս անում,
Էդ ի՞նչ թավուր բան իս անում,
Բանու: բանդ է,
Պողշուտ դանդ է,
Քաղցր լիզվով ջա՛ն իս հանում:
Եվ այլն:

Սայաթ-Նովայի որոշ տողերը, թեև աշուղական երգերի, եղանակների հետևություններ են գրված, բայց վարմանալի կատարյալ են բառական ոտքերի տեսակետից: Բոլոր հատածներն ու տակտամասերը վերջանում են ամբողջական բառական ոտքերով: Իհարկե բոլոր խաղերում էլ բառական ոտքը պատա-

հական կերպով կարող է երբևից համընկնել տակտամասի դադարի հետ, բայց ամբողջ խաղը չունի և չի կառուցում ունենալ կանոնավոր բառական ոտքեր: Այս բառատու վերջանիկ բացասություն է աշուղի երկրորդ դավթարում Գեորգ Ասատուրի հայտնաբերած ՄԱ խաղը, որը աշուղի որդի Օհանը մուստազար է անվանել: Սա զրված է 14 վանկանի ոտանավորի սխեմայով ($5-4-5=14$): Ունի չորս տուն, տունը՝ 6 տող, ընդ որում վերջին երկու տողը (Ե և Զ) կրկնվում են բոլոր տողերի վերջում՝ Դ տողից հետո: Առաջին տան վեց տողերը նույն հանգնուն են (ս...արևմ էրված իմ»), Բ, Գ, Դ տների մեջ առաջին չորս տողերը նույնահանգ են, իսկ վերջին երկուսը կրկնություն են առաջին տան Ե և Զ տողերի: Խաղն արտակարգ սահուն է և երաժշտական: Մեր բաղմամբաստակ երգիչ Շաբա Տալյանը սույն երգին հարմարեցրել է մի սքանչելի եղանակ, որով և տարածվել է այն:

Ֆահրադըն միտած./Շիրինն ասաց՝/զարեն Էրված իմ.

Քաղվիլ է վարբըն մոտ չի բողնում./խաբեն Էրված իմ.

Բըլբուլըն ասաց՝/«վարբիս խաբի/բաբեն Էրված իմ».

Տասնումկ ամիս մունջ իմ կացի՝/տաբեն Էրված իմ.

Աստված կու սիրիս/զար մի համնի./զարեն Էրված իմ.

Մեջլումի նրման/մուն իմ գսլի./խաբեն Էրված իմ:

Բառական ոտքեր ունեն նաև Սալյաթ-Նովայի ԻՂ և ԻԲ խաղերը, որոնք ի տարբերություն բոլոր երգերի՝ հյուսված են երկուական տողերով, բայցի նման: Տաղաչափության տեսակետից էլ կատարյալ են այս երգերը. բոլոր տակտամասերը վերջանում են կատարյալ բառական ոտքերով: Սրանք պարսից բանաստեղծների զադեղների ձևով ստեղծված բանաստեղծություններ են, ավելի զրահան, քան աշուղական: Հանգավորումն էլ կանոնավոր է. առաջին բեյթի (երկ-տողի) Ա և Բ տողերը նույնահանգ են, այնուհետև մյուս երկտողերի Բ տողերը հանգավորվում են առաջին տան հանգերով, իսկ Ա տողերը մնում են անհանգ: Չափը 15 վանկ է ($4-4-4-3$):

Շատ սիրուն իս./Շախարայի/ասողին՝խաբ չիս անի.

Անջաղ զրցիս/էջիս մեջըն/իդ կեհաս՝ քաբ/չիս անի:

Էջիսըն հեստի/կրակ ունի՝/վունց կու Էրվի./վունց կերբա.

Թեզուզ նրնգեիմ/ծովի մեջըն՝/նովնալու հաբ/չիս անի:

Բաա աշուղըն վունց դիմանա/ձու բու տրված/կեծակուս,

Դուն իննակալ/բաբավուր Խս՝/բեհուրագար/չիս անի:

Թե վուր սաբեբուն ռանդիրիս/կու հալիս մումի նման

Թե վուր քաղաբ տիդ հանդիրիս./կու քանդիս-վաբ/չիս անի:

Իսկի բեհուրագար չունի Շախարայի/չասողըն

Էնդո՛ւ համա./Սալյաթ-Նովա, շատ էջիլար/չիս անի:

Մեղ թվում է, որ 7-րդ և 9-րդ տողերը ևս զրված են եղել բառական տաքերով, սակայն երգելիս կամ արտադրելիս աղավաղվել են, կամ փոխվել է բառի տեղը, որից և խախտվել են ոտքերը: Օրինակ, վերջին տան առաջին տողը կանոնավոր դառնալու համար հարկավոր է առաջին երկու բառերի տեղերը փոխել այսպես՝

Բեհուրագար/իսկի չունի/Շախարայի/չասողըն...

Սովորաբար պարսից զասական զադեղները զրվում էին երկու տողանոց տներով: Սրանք արմատապես տարբերվում են աշուղական զադեղներից:

թյուն է տալիս ուղղելու ու վերականգնելու երգերի աղավաղված կամ անընդունելի բառերն ու հանգերը:

Աշուղական երգերի դանազան ձևեր է օգտագործել: Սայաթ-նովան իր հայերեն, վրացերեն և մանավանդ ադրբեջաներեն խաղերում, որոնք ունեն բարդ ու բազմազան շեշտադրություն: Սրանք մեծ հետաքրքրություն կարող են ներկայացնել նրա հորինած եղանակների ուսումնասիրությանը՝ զրադիոլների համար:

СТИХОСЛОЖЕНИЕ АРМЯНСКИХ ПЕСЕН САЯТ-НОВЫ

К. Г. ДУРГАРЯН

(Р е з ю м е)

Ашугские песни создаются не для чтения, а для песнопения; поэтому в них принимаются во внимание ударения мелодий, но не слов. В этих песнях словесные стопы (ямб, анапест, дактиль и др.) не употребляются; музыкальность песен сохраняется посредством одинакового количества слогов. Цельность строк, как ритмических соединений, сохраняется паузой в конце каждой строки; эта пауза систематически повторяется после определенного количества слогов. Кроме того, строки различаются рифмой, которая является необходимым компонентом ашугских песен.

Саят-Нова создал на трех языках более двухсот песен, имеющих различные формы. Особенно примечательны его мухаммазы. Хотя около половины песен великого поэта на армянском языке являются четырнадцати-, пятнадцати- и шестнадцатисложными мухаммазами, однако они имеют особую рифмовку, не повторяют друг друга ни по форме, ни по содержанию. Кроме мухаммазов, Саят-Нова создал песни и других форм (гапия, дивани, гошма, варсаги, разияни, баритавур и т. д.). Много песен создал Саят-Нова и посредством сложных форм, соединяя различные ашугские формы (мухаммаз-баяти, рубай-баяти-таслиб и др.).

Говоря об особенностях стихосложения Саят-Новы, необходимо отметить, что, не в пример другим ашугам, он имеет стихотворения и словесными стопами (стихосложением), подобно бейтам и газелям великих поэтов Востока.

Саят-Нова важное место уделил ритмическим ударениям песен (речь идет, безусловно, о музыкальных ударениях, которые не совпадают с общепринятыми грамматическим ударениям). В этом смысле его песни безукоризненны. Их слоги разнообразны и совершенны, они доставляют истинное музыкальное наслаждение, лаская слух своей мелодичностью. Саят-Нова усовершенствовал ашугское стихосложение, доведя его (в некоторых творениях) до высот поэтического мастерства. Он стал классиком средневековой поэзии и оказал огромное влияние на творчество ашугов и поэтов трех братских закавказских народов в последующее время.